համայնքապետարանի գործողությունը՝ ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված թիվ Ե-15/23/0085 բանկային երաշխիքի գումարի՝ 4.440,000 (չորս միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի գանձման վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ «Էլշին« ՍՊԸ–ի հայցն ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի՝ ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է մերժման:

–

<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվոր կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Էլշին» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի՝ ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am